# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ. օգոստոսի 29-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի 2022-2023 ուս.տարվա առաջին նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ.՝ Ս.Էլբակյանը, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը:

ՕԳՈՍՏՈՍ - 1. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի հաստատում:

2. 2022-2023 ուս.տարվա ծավալի և ծանրաբեռնվածության հաստատում:

3. Առկա բակալավրիատի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստում:

4. 2022-2023 ուս.տարվա առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:

5. 2022-2023 ուս.տարվա մագիստրոսական ատենախոսությունների առաջարկվող թեմաները

6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 1. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը ներկայացրեց ամբիոնի տարեկան աշխատանքային պլանը:

ՕԳՈՍՏՈՍ - 1. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի հաստատում:

2. 2022-2023 ուս.տարվա ծավալի և ծանրաբեռնվածության հաստատում:

3. Առկա բակալավրիատի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստում:

4 . 2022-2023 ուս.տարվա առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:

5. Ընթացիկ հարցեր:

ՍԵՊՏԵՄԲԵՐ – 1. 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատում:

2. Մագիստրոսական ատենախոսութունների թեմաների և նրանց ղեկավարների հաստատում:

3. Ընթացիկ հարցեր:

ՀՈԿՏԵՄԲԵՐ - 1. Առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում /մասնագիտական/:

2. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:

3. Ընթացիկ հարցեր:

ՆՈՅԵՄԲԵՐ – 1. Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հաշվետվություն:

2. 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի
ղեկավարի հաշվետվություն:
3 . Ընթացիկ հարցեր:

ԴԵԿՏԵՄԲԵՐ - 1. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստում:
2. Հեռակա ուսուցման ուսումնական գործունեության նախապատրաստում:
3. Ընթացիկ հարցեր

ՀՈՒՆՎԱՐ – 1. Ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Առկա 3-րդ կուրսի մանկավարժական և առկա 2-րդ կուրսի
ուսումնաճանաչողական պրակտիկաների նախապատրաստում:
3. Հեռակա ուսուցման մանկավարժական պրակտիկաների
նախապատրաստում:
4. Ընթացիկ հարցեր

ՓԵՏՐՎԱՐ - 1. 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:
2. 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատում:
3. Հեռակա 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների
հաստատում /մեթոդիկա/:
4. Ընթացիկ հարցեր:

ՄԱՐՏ - 1. Առկա բակալավրիատի 3-րդ կուրսի և հառակա 4-րդ, 5-րդ կուրսերի
մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվություն:
2. 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների կատարման
ընթացքի հաշվետվություն:
3. Մագիստրատուրայի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական
պրակտիկայի նախապատրաստում:
4. Ընթացիկ հարցեր:

ԱՊՐԻԼ - 1. Մագիստրոսական ատենախոսությունների նախնական պաշտպանություն:
2. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:
3. Ընթացիկ հարցեր:

ՄԱՅԻՍ - 1. Ամառային քննաշրջանի նախապատրաստում:
2. Առկա ուսուցման համակարգի /բակալավր/ ամփոփիչ ատեստավորման,
մագիստրատուրա /մագիստրոսական ատենախոսությունների
պաշտպանության/ արդյունքների ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

ՀՈՒՆԻՍ - 1. Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ամփոփիչ

ատեստավորման արդյունքների ամփոփում:

2. Առկա ուսուցման համակարգի ամառային քննաշրջանի արդյունքների ամփոփում:
3. Առարկաների ուսումնամեթոդական փաթեթների վերանայում:
4. 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել Երաժշտության մանկավարժության ամբիոնի 2022-2023 ուս. տարվա տարեկան աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս. տարվա ծավալ-ծանրաբեռնվածության հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը նշեց, որ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի 2022-2023 ուստարում ուսումնական աշխատանքների ծավալը կազմել է 26700 ժամ:

Այլ ամբիոններին փոխանցված ժամաքանակ – 1448 ժամ

Ժամավճար – 176 ժամ:

Թափուր է մնացել 3343 ժամ:

Արդյունքում գոյացած 21733 ժամը բաշխվել է ամբիոնի ներքոհիշյալ դասախոսների միջև հետևյալ կերպ.

1.Էլբակյան Սարգիս Էդուարդի – մ.գ.թ., պրոֆ.պ, ամբիոնի վարիչ 1.0 դր. /748ժ/

2. Հարությունյան Աննա Պետրոսի - ա.գ.թ., դոցենտ 1.00դր. /852ժ/

3. Բաղդասարյան Մարգարիտա Էդուարդի – դոցենտ 1.00 դր. /864ժ/

4.Մելիքսեթյան Գոհար Բեժանի – մ.գ.թ., դոցենտ 1.00 դր. /861ժ/

5.Եղիզարյան Վյաչեսլավ Արշավիրի - ա.գ.թ., դոցենտ 0. 75 դր. /667ժ/

6. Ադամյան Աննա Ժորիկի – ա.գ.թ.,դոցենտ 0. 75 դր. /674ժ/

7.Մադոյան Նաիրա Հրանտի – դասախոս 0. 75դր. /704ժ/

8. Ալավերդյան Տիգրան Գարիկի – պրոֆեսոր 0. 75 դր. /621ժ/

9. Խաչատրյան Լիլիկ Գուրգենի – դոցենտ 0.75 դր. /436ժ/

10. Բադալյան Նունե Էդիկի – պրոֆեսոր 0.25 դր. /262ժ/

11. Թադևոսյան Շաքե Սուրենի – դոցենտ 0. 75դր. /655ժ/

12. Ավետիսյան Ֆլորա Յուրիկի – ասիստենտ 0. 75դր. /762ժ/

13. Դադոյան Ելենա Թելմանի – դասախոս 0.75 դր. /727ժ/

14. Կոստանյան Արուսյակ Համազասպի – դասախոս 0.5 դր. /477ժ/

15. Կարապետյան Մերի Համլետի - դասախոս 0.5դր. /466ժ /

16. . Բաբուրյան Արտաշես Ռոբերտի - դոցենտ 1.00 դր. /850ժ/

17. Յուզբաշյան Յուրիկ Վաղարշակի - մ.գ. դոկտոր, պրոֆեսոր 0. 75դր. /546ժ/

18. Գևորգյան Անահիտ Մարատի – մ. գ . թ . , դ ո ց ե ն տ 1. 00 դ ր . /421ժ /

19. Գասպարյան Անահիտ Սաշայի - դոցենտ 1.00 դր. /850ժ/

20. Պետրոսյան Սուսաննա Էդվարդի - ասիստենտ 1.00 դր. /955ժ/

21. Հակոբովա Ռիմմա Սերգեյի - դոցենտ 0. 5դր. /422ժ/

22. Մաթևոսյան Շուշանիկ Ռուդոլֆի - ասիստենտ 1.00 դր. /951ժ/

23. Սիմոնյան Մարիա Արամի - ասիստենտ 0.75 դր. /694ժ/

24. Մարգարյան Նաիրա Արթուրի - ասիստենտ 1.00 դր. /944ժ/

25. Ավետիսյան Մարիաննա Ռոլանդի - դասախոս 1.00 դր. /950ժ/

26. Օջախյան Արմինե Օնիկի - ասիստենտ 1.00 դր. /946ժ/

27. Խաչատրյան Արաքսյա Արտավազդի - դասախոս 1.00 դր. /946ժ/

28. Սայադյան Զարուհի Խաչիկի - դասախոս 0.5 դր. /492ժ/

29. Հակոբյան Արմինե Աշոտի – ա.գ.թ., դասախոս 0. 75 դր. /702ժ/

30. Խաչիկյան Քրիստինե Սերգեյի – դասախոս 0.5 դր. /474ժ/

31. Մկ ր տչ յ ան Ար մ ե ն Մկ ր տի չ ի - դ աս ախո ս 0. 25 դ ր . /385ժ /

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2022-2023 ուստարվա ծավալ-ծանրաբեռնվածությունը:

ԼՍԵՑԻՆ – Առկա 3-րդ և 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, պրակտիկայի ղեկավար Շուշանիկ Մաթևոսյանը ներկայացրեց, որ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրի 2022-2023 ուստարվա երաժշտական կրթություն մասնագիտության 3-րդ կուրսի 1-ին կիսամյակի մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 2022 թ.-ի սեպտեմբերի 13-ից մինչև դեկտեմբերի 20-ը /շաբաթական 1-օր/ ՀՊՄՀ թիվ 57 և Վազգեն Ա-ի անվ. թիվ 168 հիմնական դպրոցներում, մեթոդիստներ ՝ Ելենա Դադոյան և Արաքսյա Խաչատրյան:

Առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրի 2022-2023 ուստարվա երաժշտական կրթություն մասնագիտության 4-րդ կուրսի 1-ին կիսամյակի մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 2022 թ.-ի սեպտեմբերի 12-ից մինչև հոկտեմբերի 21-ը՝ Ս. Շահումյանի անվան թիվ 1, Վազգեն Ա-ի անվան թիվ 168 և Խ. Աբովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցներում: Մեթոդիստներ ՝ Սուսաննա Պետրոսյան, Մարիաննա Ավետիսյան և Արաքսյա Խաչատրյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Առկա 3-րդ և 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստման ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս.տարվա առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոսներ՝ Գոհար Մելիքսեթյանը, Աննա Հարությունյանը, Վյաչեսլավ Եղիգարյանը և Շուշանիկ Մաթևոսյանը ներկայացրին վերանայված 2022-2023 ուս.տարվա առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2022-2023 ուս.տարվա առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս.տարվա առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մագիստրոսներին առաջարկվող մագիստրոսական ատենախոսությունների թեմաները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը ներկայացրեց 2022-2023 ուս.տարվա առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մագիստրոսներին առաջարկվող մագիստրոսական ատենախոսությունների թեմաները:

1. Միաձայն և երկձայն երգեցողության զարգացման մեթոդիկան կրտսեր դպրոցում:
2. Սովորողների երգչային ձայնի զարգացումը երաժշտության դասին և դպրոցական երգչախմբի պարապմունքներին:
3. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը և առանձնահատկությունները 5-7-րդ դասարաններում:
4. Ժողովրդական երգը որպես ազգային ինքնության զարգացման միջոց:
5. Ներսես Շնորհալու երաժշտամանկավարժական հայացքները:
6. Լադային սոլմիզացիան որպես կրտսեր դպրոցականների լսողության զարգացման միջոց:
7. Երաժշտության ընկալման ձևավորման և զարգացման ուղիները կրտսեր դպրոցում:
8. Երաժշտական դաստիարակության ժամանակակից պահանջները Հայաստանի հանրակրթական դպրոցներում:
9. Երաժշտամանկավարժական ժամանակակից միտքը և հայ երեխաների երաժշտական դաստիարակությունը:
10. Կարլ Ադոլֆ Մարտինսեն՝ տեսաբան, մեթոդիստ և խմբագիր:
11. Էդվարդ Բաղդասարյանի «6 պրելյուդներ»-ի կատարողական վերլուծությունը:
12. Հենրիխ Նեյհաուզի դաշնամուրային դպրոցի առանձնահատկությունները:

13. Կառլ Չերնիի դաշնամուրային վարժությունները որպես սովորողի տեխնիկայի զարգացման միջոց:

14. Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը երաժշտության միջոցով:

15. Առնո Բաբաջանյանի դաշնամուրային մանրանվագները ուսումնական գործընթացում /դպրոցում/:

16. Մանկական օպերայի ժանրային առանձնահատկությունները:

17. Երաժշտական ընդունակությունները և նրանց զարգացման մեթոդները:

18. Կրտսեր տարիքի դպրոցականների երաժշտական ճաշակի զարգացումը:

19. Սովորողների ծանոթացումը ռապսոդիա ժանրին:

20. Ինքնագործ երգչախմբի դերը երաժշտական դաստիարակության գործում:

21. Մանկական երգչախմբի դերը երաժշտական դաստիարակության գործում:

22. Գեղունի Չթչյանի խմբերգերը «Երաժշտություն» առարկայի դասընթացում:

23. Երվանդ Երկանյանի մանկական ալբոմը «Երաժշտություն» առարկայի դասընթացում:

24. Երվանդ Երկանյանի խմբերգային ստեղծագործությունները «Երաժշտություն» առարկայի դասընթացում:

25. Էդգար Հովհաննիսյանի խմբերգերը «Երաժշտություն» առարկայի դասընթացում:

26. Ալեքսանդր Հարությունյանի վոկալ-խմբերգային ստեղծագործությունները:

27. Էդգար Հովհաննիսյանի վոկալ-խմբերգային ստեղծագործությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2022-2023 ուս.տարվա առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսի մագիստրոսներին առաջարկվող մագիստրոսական ատենախոսությունների թեմաները:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ԷԼԲԱԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2**

2022 թ.-ի սեպտեմբերի 12-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ.՝ Ս.Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական կազմը:

ՍԵՊՏԵՄԲԵՐ – 1. 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատում:

2. Մագիստրոսական ատենախոսութունների թեմաների և նրանց ղեկավարների հաստատում:

3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ, ա.գ.թ., դոցենտ՝ Աննա Հարությունյանը ներկայացրեց տեսական առարկաների 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի բաց դռների և դասալսումների գրաֆիկը: Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, ասիստենտ՝ Շ.Մաթևոսյանը ներկայացրեց խմբավարություն և ձայնադրում առարկաների բաց դռների և դասալսումների գրաֆիկը, իսկ ա.գ.թ., դոցենտ Վ.Եղիգարյանը՝ նվագարան առարկայի բաց դռների և դասալսումների գրաֆիկը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի բաց դռների և դասալսումների գրաֆիկները:

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի 2022-2023 ուս.տարվա մագիստրոսական ատենախոսությունների թեմաների և նրանց ղեկավարների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ՝ Ս. Էլբակյանը ներկայացրեց 2022-2023 ուս.տարվա մագիստրոսական ատենախոսությունների թեմաները և ղեկավարներին:

| | Ուսանող | Թեմա | Գիտական ղեկավար |
|---|---|---|---|
| 1. | Գրիգորյան Ելենա | «Երաժշտական կերպարի ընկալումը աշակերտների կողմից՝ Յուրի Գևորգյանի «Մանկական պիեսների ալբոմի» օրինակով» | դոցենտ՝ Մ. Բաղդասարյան |
| 2. | Սողոմոնյան Մարիամ | «Գեղունի Չթչյանի մանկական երգերի դաստիարակչական նշանակությունը «Երաժշտություն» առարկայի դասերին» | դոցենտ՝ Մ. Բաղդասարյան |
| 3. | Նամեսնիկյան Անի | «Ներսես Շնորհալու երաժշտա-մանկավարժական գործունեության արժևորումը երաժշտության ուսուցման գործընթացում» | մ.գ.թ., դոցենտ՝ Գ. Մելիքսեթյան |
| 4. | Մաթոսյան Ժաննա | «Երաժշտական ընկալման զարգացման ուղիները հանրակրթական դպրոցում» | մ.գ.թ., դոցենտ՝ Ա. Գևորգյան |
| 5. | Ավետիսյան Սոնա | «Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը երաժշտության միջոցով» | մ.գ.թ., դոցենտ՝ Ա. Գևորգյան |

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մագիստրոսական ատենախոսությունների թեմաները և ղեկավարներին:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Գայանե Սերգեյի Հարությունյանի՝ «Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց» խորագրով ատենախոսության նախապաշտպանությունը /գիտ.ղեկ.՝ մ.գ.դ., պրոֆեսոր Յուրի Յուզբաշյան/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ. Ս. Էլբակյանը, ատենախոսության գիտ.ղեկավար, մ.գ.դ., պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանը, դոցենտ Ռիմա Հակոբովան, մ.գ.թ., դոցենտ Անահիտ Գևորգյանը, ա.գ.թ., դոցենտ Աննա Ադամյանը, դասախոս Քրիստինե Խաչիկյանը, հաստատելով թեմայի արդիականությունն ու պահանջարկը թե՛ Հայաստանում, թե՛ Հայաստանից դուրս այլ հայ գաղթօջախներում: Ելույթ ունեցավ նաև ատենախոսության գրախոս Արմինե Հակոբյանը, նշելով, որ Գայանե Հարությունյանը, ապրելով սփյուռքում, գտնում է, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայստանից դուրս ապրող յուրաքանչյուր՝ մասնավորապես հայ մանկավարժի և գիտակից մարդու պարտքն է իր կարողություններով, գիտելիքներով ու փորձով նպաստել ապագա սերնդին ազգային ոգով դաստիարակելու գործին: Այս առումով ատենախոսությունը արդիական է և չափազանց կարևոր: Եվ չնայած մի քանի թերություններին կապված եզրույթների կիրառման հետ, գրախոսը նշեց, որ Գայանե Սերգեյի Հարությունյանի՝ ,,Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց,, ատենախոսությունն ավարտուն գիտական աշխատանք է և լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Գայանե Սերգեյի Հարությունյանի՝ «Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց» խորագրով՝ ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» /երաժշտություն/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունը (կողմ-30, ձեռնպահ-0, դեմ-0) երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Նիստի նախագահ՝ Ս. Էլբակյան

Քարտուղար՝ Լ. Սիմոնյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3**

2022թ.-ի հոկտեմբերի 27-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչ Սարգիս Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Օրակարգում -

1. Առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում /մասնագիտական/:
2. Առկա ուսուցման 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի հաշվետվություն:
3. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – Առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը ներկայացրեց առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաները:

1. Երաժշտության կապը այլ արվեստների հետ:
2. Տրուբադուրների և մայստերզինգերների արվեստը:
3. Օպերա-seria:
4. Կոմիկական օպերաներ:
5. Յ.Հայդնի դերը համաշխարհային երաժշտարվեստում:
6. Վ.Մոցարտի դերը համաշխարհային երաժշտարվեստում:
7. Վ. Մոցարտի օպերային ժառանգությունը:
8. Վ.Մոցարտի կլավիրային արվեստը:
9. Լ.Բեթհովենի հերոսական կերպարները:
10. Լ.Բեթհովենը և ռոմանտիզմը:
11. Ռոմանտիզմը երաժշտության մեջ:
12. Ռոմանտիզմը և Ֆ.Շուբերտի արվեստը:
13.Դասական և ռոմանտիկ միտումների հարաբերակցությունը Ֆ.Շուբերտի ստեղծագործության մեջ:
14. Ն.Պագանինիի վիրտուոզ կատարողական նորարարությունները:
15. Ֆ.Մենդելսոնի սիմֆոնիկ երաժշտությունը:
16. Ֆ. Մենդելսոնի հասարակական գործունեությունը:
17. Մենդելսոնի դաշնամուրային ստեղծագործությունը:
18. Ծրագրայնությունը երաժշտության մեջ:
19. Ֆ.Շոպենի դաշնամուրային կոնցերտների առանձնահատկությունները
20. Բրամսը և ռոմանտիզմը:
21. Ռ.Վագների օպերային ռեֆորմի սկզբունքները:
22. Ֆ.Լիստի տրանսցեդենտալ էտյուդներ:
23. Ֆ.Լիստի դաշնամուրային կոնցերտներ:
24. Ռ.Շումանի դաշնամուրային շարքերի առանձնահատկությունները:
25. Հեքիաթային կերպարները Է.Գրիգի ստեղծագործություններում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաները:

ԼՍԵՑԻՆ - Առկա ուսուցման 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրակտիկայի ընթացքը ներկայացրեց երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ, պրակտիկայի ղեկավար՝ Շուշանիկ Մաթևոսյանը, նշելով, որ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտական կրթություն մասնագիտության 2022-2023 ուս. տարվա առկա ուսուցման բակալավրիատի 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան անցկացվեց սեպտեմբերի

12-ից մինչև հոկտեմբերի 21-ը՝ Ս. Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցում (մեթոդիստ՝ Սուսաննա Պետրոսյան), Խ. Աբովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում (մեթոդիստ՝ Մարիաննա Ավետիսյան) և Վազգեն Ա-ի անվան թիվ 168 հիմն. դպրոցում (մեթոդիստ՝ Արաքսյան Խաչատրյան):

Պրակտիկային նախապատրաստելու համար կազմակերպվել էր կոնֆերանս պրակտիկայի ղեկավար Շ. Մաթևոսյանի կողմից՝ ուսանողների և մեթոդիստների մասնակցությամբ, որտեղ ներկայացվեցին մանկավարժական պրակտիկայի նպատակը, խնդիրները և պահանջները: Ուսանողները դասեր են անցկացրել 1-ից 7-րդ դասարաններում, յուրաքանչյուր ուսանող պարապել է 6 դաս: Կազմակերպվել են միջոցառումներ, երաժշտական դասամիջոցներ: Դասընթացները, դասի պլանները և վերլուծությունները տեղադրվել են google classroom հարթակում ևս: Ուսանողներին հաջողվել է կազմակերպել այնպիսի արդյունավետ և բովանդակալից դասեր, որի համար թե՛ ուսանողները, թե՛ մեթոդիստները գովասանքի խոսքերի են արժանացել դպրոցների տնօրենների և ուսուցիչների կողմից, իսկ մեթոդիստ Արաքսյա Խաչատրյանը ստացել է շնորհակալագիր՝ Վազգեն Ա-ի անվան թիվ 168 հիմնական դպրոցի կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ - 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի որակի պատասխանատու՝ մ.գ.թ., դոցենտ Գոհար Մելիքսեթյանը ներկայացրեց էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը, նշելով, որ էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքները հարկավոր է կատարել է՛լ ավելի զգոն և պատշաճ կերպով: Հարկավոր է google classroom հարթակում ժամանակին տեղադրել բոլոր դասընթացների առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները ուսումնական նյութերը և հարցաշարերը, ժամանակին լրացնել էլեկտրոնային մատյանները և էլեկտրոնային ամփոփագրերը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը համարել հավարար:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի առկա ուսուցման 4-րդ կուրսի ավարտական որակավորման քննությունների ծրագրերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Վյաչեսլավ Եղիզարյանը և ասիստենտ Շուշանիկ Մաթևոսյանը ներկայացրին առկա ուսուցման 4-րդ կուրսի «Խմբավարություն» և «Նվագարան» առարկաների ավարտական որակավորման քննությունների ծրագրերը .

**«Խմբավարություն»**

| | ուսանող | դասախոս | ծրագիր |
|---|---|---|---|
| 1. | Բդոյան Վաչագան | Շուշանիկ Մաթևոսյան | Ռ.Պետրոսյան -«Նազանք» |

| | | | |
|---|---|---|---|
| 2. | Ավետիսյան Մարի | Շուշանիկ Մաթևոսյան | Ռոջեր Էմերսոն- «Let my people go» |
| 3. | Վարդանյան Տաթևիկ | Շուշանիկ Մաթևոսյան | Ռ.Ամիրխանյան -Երազ իմ երկիր հայրենի |
| 4. | Եղոյան Էսթեր | Սուսաննա Պետրոսյան | Վիկտոր Ջոնսոն -Festival Sanctus |
| 5. | Սարգսյան Լաուրա | Սուսաննա Պետրոսյան | Բրաին Լեվիս- Benedictus |
| 6. | Կարսյան Մանուշակ | Սուսաննա Պետրոսյան | Սաթյան- Էլեգիա |
| 7. | Իշխանյան Մարինե | Սուսաննա Պետրոսյան | Մորիս Գրեյ - Benedictus |
| 8. | Մարուքյան Լիլիթ | Սուսաննա Պետրոսյան | Մորիս Գրեյ- Dies irae |
| 9. | Դանիելյան Լիլիթ | Մարիա Սիմոնյան | Միքայել Հայդն, հատված Ռեքվիեմից մաս 4-րդ Sanctus |
| 10. | Պետրոսյան Սուսաննա | Մարիա Սիմոնյան | Լովլանդ-Secret garden |
| 11. | Էլոյան Վարուժան | Նաիրա Մարգարյան | Զրբաշյան- Երգ գարունքի |
| 12. | Ռիտա Հովհաննիսյան | Նաիրա Մարգարյան | Lightfoot-Piye-Yesu |
| 13. | Վարդանյան Լիանա | Նաիրա Մարգարյան | Արի իմ սոխակ, մշ.Ալթունյանի |
| 14. | Չեպուրնիխ Հասմիկ | Նաիրա Մարգարյան | Վերստովսկիյ ՝Ախ ընկերուհիներս, հատված - Ասկոլդովյան գերեզմանը -օպերայից |
| 15. | Առուստամյան Մերի | Նաիրա Մարգարյան | Ռ.Պետրոսյան -Մեզ հետ ես Աստված |
| 16. | Թալասյան Շուշանիկ | Քրիստինե Խաչիկյան | Բաբաջանյան – Իմ Երևան |
| 17. | Բաղյան Իսկուհի | Քրիստինե Խաչիկյան | Էտիեն Դե Պերուշոն - Ջիա |
| 18. | Հովհաննիսյան Սեդա | Արաքսյա Խաչատրյան | Մշ. Մոդելի- Հրաժեշտի վալս |
| 19. | Շահբազյան Հռիփսիմե | Արաքսյա Խաչատրյան | Ռ.Պետրոսյան -Դեպի աստղեր |
| 20. | Արմենակյան Արթուր | Արաքսյա Խաչատրյան | Մոլինելլի- Խաղաղության հիմն |
| 21. | Մուսախանյան Անի | Զարուհի Սայադյան | Ա.Սմբատյան -Հայաստան |
| 22. | Ալեքսանյան Սարգիս | Զարուհի Սայադյան | Ռ.Ամիրխանյան -Ինձ համար դու շող գարուն |

**«Նվագարան»**

| | ուսանող | դասախոս | ծրագիր |
|---|---|---|---|
| 1. | Բդոյան Վաչագան | Լ.Խաչատրյան | Բախ – ԼՏԿ I h. N 14 fis-moll<br>Շոպեն «Բալլադ» N 1, g-moll<br>Մետներ «Կանտատա-սերենադա» f-moll |
| 2. | Ավետիսյան Մարի | Ե. Դադոյան | Հայդն – Սոնատ-պարտիտ C-dur<br>Գ. Սարաջյան – «Երգ առանց խոսքի» |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ս. Նաղդյան - «Յաման յար» |
| 3. | Վարդանյան Տաթևիկ | Ն. Բադալյան | Բախ – Պրելյուդ<br>Սկարլատտի- Սոնատ N 131<br>Ֆ. Տառեգա – Գրանդ վալս |
| 4. | Եղոյան Էսթեր | Տ.Ալավերդյան | Չեռնի – Էտյուդ op. 740 N 11<br>Է. Օբրիգ – Պիեսա «Весной» op. 43, N 6<br>Բախ – Պրելյուդ – ֆուգա, II h., N 12 |
| 5. | Սարգսյան Լաուրա | Ա. Ադամյան | Բախ – Եռաձայն ինվենցիա N 13, a-moll<br>Գ. Չերտարյան- «Արիա»<br>Ա. Խաչատրյան - «Ժողովրդական ոճով» |
| 6. | Կարսյան Մանուշակ | Վ. Եղիզարյան | Շոստակովիչ- Պրելյուդիա-ֆուգա e-moll<br>Շուբերտ- Էքսպրոմտ վարիացիաների ձևով, ստ. 142<br>Խաչատրյան - Պոեմ |
| 7. | Իշխանյան Մարինե | Ֆ.Ավետիսյան | Մոցարտ – Սոնատ N 4, I մաս. Es-Dur<br>Շուբերտ-Լիստ - «Սերենադ»<br>Սիբելիուս- Էտյուդ N 2, op. 76 |
| 8. | Մարուքյան Լիլիթ | Շ.Թադևոսյան | Հայդն- Սոնատ F-Dur, II, III մասեր<br>Բաբաջանյան- Պրելյուդ<br>Չերնի- Էտյուդ op. 740, N 3, D-Dur |
| 9. | Դանիելյան Լիլիթ | Ա. Ադամյան | Բեթհովեն- «Легкая соната» N 20, op. 49, N 2, I մաս<br>Շոպեն- Նոկտյուրն N 19, e-moll, op.72, N 1<br>Սայաթ-Նովա-Լուսինյան- «Ամեն սազի մեջըն գոված» |
| 10. | Պետրոսյան Սուսաննա | Լ.Խաչատրյան | Խաչատրյան- Ինվենցիա b-moll<br>Հայդն-Սոնատ E-Dur, I մաս<br>Շուբերտ-Լիստ - «Սերենադ» |
| 11. | Էլոյան Վարուժան | Ա. Մկրտչյան | Բախ-Արիա<br>Տարանդիս-Վալս-մյուզետ «Վալինկա»<br>Ժիռո-«Փարիզը երկնքի տակ» |
| 12. | Ռիտա Հովհաննիսյան | Ֆ.Ավետիսյան | Հայդն-Սոնատ N 28, A-Dur, I մաս<br>Մենդելսոն-«Երգ առանց խոսքի» N 6<br>Չերնի- Էտյուդ op. 299, N 2 |
| 13. | Վարդանյան Լիանա | Շ.Թադևոսյան | Հայդն- Սոնատ h-moll, I մաս<br>Շոպեն- Նոկտյուրն N 20, cis-moll<br>Ռավինա- Էտյուդ h moll |
| 14. | Չեպուրնիխ Հասմիկ | Շ.Թադևոսյան | Բախ- ԼՏԿ II h. պրելյուդիա-ֆուգա a-moll<br>Ռախմանինով- էտյուդ-պատկեր g-moll<br>Կրամեր- Էտյուդ N 1, C-Dur |
| 15. | Առուստամյան Մերի | Վ. Եղիզարյան | Բուրգմյուլլեր- ստ.109- Էտյուդ N 9<br>Բլազոյ – Փոքր վարիացիաներ N 2<br>Ղազարյան- Սկերցո |
| 16. | Թալասյան Շուշանիկ | Ա. Ադամյան | Չիմարոզա- Սոնատա G-Dur, I մաս<br>Ա. Խաչատրյան- «Իրիկնային հեքիաթ»<br>Գեդիկե- Էտյուդ e-moll |
| 17. | Բաղյան Իսկուհի | Վ. Եղիզարյան | Բախ- Սոնատ a-moll, /խմբ. Է. Պետրի/<br>Մենդելսոն- Երգ առանց խոսքի, ստ. 38 N 5<br>Շաքարյան- Երգ առանց խոսքի |
| 18. | Հովհաննիսյան Սեդա | Լ.Խաչատրյան | Խաչատրյան- Ֆուգա c-moll<br>Հայդն- Սոնատ e-moll, I մաս<br>Ջուլլին- Ռեգթայմ |
| 19. | Շահրազյան Հռիփսիմե | Ա. Ադամյան | Մ. Կլեմենտի- Սոնատ N 4, F-Dur I մաս<br>Վ. Գիլլոկ- «Սարաբանդա»<br>Վ. Կորովիդին- «Ջրահարսիկ» |

| | | | |
|---|---|---|---|
| 20. | Արմենակյան Արթուր | Վ. Մինասյան | Խ. Ավետիսյան- Կոնցերտ շվի<br>Դինիկու- Խորո ստակատո<br>Ժողովրդական երգպար- «Փշատի ծառ» և «Ալ այլուխս» |
| 21. | Մուսախանյան Անի | Վ.Եղիզարյան | Լակ Թ.- Էտյուդ «Անուրջներ»<br>Բլազոյ- Վարիացիաներ Պյորսելլի թեմայով<br>Ղազարյան- Հումորեսկ |
| 22. | Ալեքսանյան Սարգիս | Վ. Մինասյան | Ժողովրդական երգ «Հովերզական», «Սարի աղջիկ»<br>Ժողովրդական պար «Հունձ Աբարանում»<br>Կոմիտաս «Ծիրանի ծառ» |

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել առկա ուսուցման 4-րդ կուրսի ավարտական որակավորման քննությունների ծրագրերը:

ԼՍԵՑԻՆ – Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաների գնահատման համակարգի մշակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը նշեց, որ ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաների համար մշակված է գնահատման համակարգ, որը հնարավորություն է տալիս հստակ արտացոլելու սովորողների գիտելիքները և կարողությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաների գնահատման համակարգի գործող տարբերակը թողնել նույնը, իսկ 2023-2024 ուս. տարվա համար նորից կվերանայվի հատկապես ընթացիկ և միջանկյալ ստուգումների գրավոր կամ բանավոր ձևով անցկացնելու հարցը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2022թ.-ի նոյեմբերի 24-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հաշվետվություն:
2. 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվություն:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ -
Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոսները ներկայացրին իրենց գիտական աշխատանքները, որոնք կատարվել են 2022թ.-ին:

| Հեղինակ Ա.Ա.Հ. | Հոդվածի , զեկույցի անվանումը | Ծավալ, հրատարակչ. |
|---|---|---|
| Բաղդասարյան Մարգարիտա | «Творческая палитра композитора Юрия Геворкяна» | Տպագրության մեջ է |
| Բաղդասարյան Մարգարիտա | «Композитор Юрий Геворкян» (к юбилею композитора) | Տպագրության մեջ է |
| Հարությունյան Աննա | «Ալեքսանդր Սպենդիարյան երաժշտական դպրոցի պատմության էջերից» | Տպագրության մեջ է |
| Դադոյան Ելենա | «Сценическое волнение и способы его преодоления» | 5 ст. |
| Դադոյան Ելենա | «ФОЛЬКЛОР В АРМЯНСКОЙ КУЛЬТУРЕ НОВЕЙШЕГО ВРЕМЕНИ» | 5 ст. |
| Կոստանյան Արուսյակ | «ЛЮДВИГ ВАН БЕТХОВЕН, СОНАТА OP.2 №3 C-DUR: МЕТОДИЧЕСКИЙ АНАЛИЗ, ТРАКТОВКА И МЕТОДИЧЕСКИЕ СОВЕТЫ ДЛЯ ИСПОЛНЕНИЯ» | Տպագրության մեջ է |
| Ավետիսյան Ֆլորա | РОЛЬ РЕПЕРТУАРА В РАЗВИТИИ МУЗЫКАНТА | Տպագրության մեջ է |
| Եղիզարյան Վյաչեսլավ | Своеобразие становления и черты хачатуряновского пианизма | 12 ст. |
| Եղիզարյան Վյաչեսլավ | А. Бабаджанян- <<Зимняя любовь>> | 6 ст. |
| Ադամյան Աննա, Բաբայան Արմինե | «Լուիզա Ձեյթադյան. խմբավարը և մանկավարժը» | 76 էջ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն |
| Կոստանյան Արուսյակ | «Հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ մեթոդական ցուցումներով» | 88 էջ, «Լուսակն» հրատարակչություն |
| Բաղդասարյան Մարգարիտա | «Ռուս երաժշտության պատմություն» ուսումնական ձեռնարկ՝ լրացված և վերամշակված | 444 էջ, «Լուսակն» հրատարակչություն |
| Ադամյան Աննա | «Մուզարտ» դաշնամուրի մեթոդ-ինքնուսույց մեծահասակների համար | 176 էջ, Հեղինակային հրատարակություն |
| Մելիքսեթյան Գոհար | Պոլիֆոնիա (ուսումնական ձեռնարկ) | 78 էջ, Հեղինակային հրատարակություն |
| Մելիքսեթյան Գոհար | Պոլիֆոնիա (մեթոդական ձեռնարկ, մաս 1) | 48 էջ, Հեղինակային հրատարակություն |
| Մելիքսեթյան Գոհար | Պոլիֆոնիա (մեթոդական ձեռնարկ, մաս2) | 26 էջ, Հեղինակային հրատարակություն |
| Մելիքսեթյան Գոհար | Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն (ուսումնական ձեռնարկ) | 106 էջ, Հեղինակային հրատարակություն |
| Բադալյան Նունե | Դասական կիթառի դպրոց / Դասագիրք | 158 էջ, «Ֆրայմ» հրատ. |
| Բադալյան Նունե | Քրիստոատիա կիթառի համար I-VII դասարան / Դասագիրք | 148 էջ, «Վան Արյան» հրատ. |
| Յուզբաշյան Յուրի, Փահլևանյան Ալինա | «Երաժշտություն» 7-րդ դասարան | 63 էջ, «Զանգակ» հրատ. |

ՈՐՈՇԵՑԻՆ - Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հաշվետվության հարցը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրակտիկայի ընթացքը ներկայացրեց Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ, պրակտիկայի ղեկավար՝ Շուշանիկ Մաթևոսյանը, նշելով, որ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտական կրթություն մասնագիտության առկա ուսուցման բակալավրիատի 2022-2023 ուս. տարվա երաժշտական կրթություն մասնագիտության 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան անցկացվեց սեպտեմբերի 12-ից հոկտեմբերի 21-ը՝ Ստ. Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցում (մեթոդիստ՝ Պետրոսյան Սուսաննա), Վազգեն Ա-ի անվան թիվ 168 հիմնական դպրոցում (մեթոդիստ՝ Խաչատրյան Արաքսյա) և Խ.Աբովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում (մեթոդիստ՝ Ավետիսյան Մարիաննա):

Պրակտիկային նախապատրաստելու համար կազմակերպվել էր կոնֆերանս պրակտիկայի ղեկավար Շ. Մաթևոսյանի կողմից՝ ուսանողների և մեթոդիստների մասնակցությամբ, որտեղ ներկայացվել էր մանկավարժական պրակտիկայի նպատակը, խնդիրները, ընթացքը և պահանջները: Ուսանողները դասեր են անցկացրել 1-ից 7-րդ դասարաններում, յուրաքանչյուր ուսանող վարել է 6 դաս, կազմակերպվել են միջոցառումներ: Դասընթացը մենկնարկվել է նաև google classroom հարթակում, որտեղ տեղադրվել են դասի պլանները և դասերի վերլուծություններ են կատարվել:

ՈՐՈՇԵՑԻՆ - 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Սերգեյ Խաչատրյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը և մ.գ. դոկտոր, պրոֆեսոր Յ. Յուզբաշյանը նշեցին, որ հայցորդ Սերգեյ Խաչատրյանը մինչ օրս չի ներկայացել ամբիոն և չի հանդիպել գիտական ղեկավարի հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը առաջարկեց չատեստավորել հայցորդ Սերգեյ Խաչատրյանին և նրա ատեստավորման հարցը բացասական կարծիքով ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ:

| | |
|---|---|
| ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ | Ս. ԷԼԲԱԿՅԱՆ |
| ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ | Լ. ՍԻՄՈՆՅԱՆ |

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2022թ.-ի դեկտեմբերի 15-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

ՕՐԱԿԱՐԳ – 1. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստում:

2.Հեռակա ուսուցման ուսումնական գործունեության նախապատրաստում:

3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Ձմեռային քննաշրջանի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյանը ներկայացրեց ավարտվող դասընթացները բակալավրիատում. 1-ին կուրս - հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն,

2-րդ կուրս - սոլֆեջիո և հարմոնիա,

3-րդ կուրս – փիլիսոփայություն,

4-րդ կուրս – ձայնադրում, օտար լեզու:

Մագիստրատուրայում՝

1-ին կուրս - մեներգեցողության և խմբավարության դասավանդման մեթոդիկա,

2-րդ կուրս - մեներգեցողություն և խմբավարություն:

Դասախոսներին հանձնարարվեց պատրաստել քննական տոմսերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ձմեռային քննաշրջանի նախապատրաստումը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ - Հեռակա ուսուցման ուսումնական գործունեության նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը նշեց, որ հունվարի 9-ից սկսվելու են հեռակա ուսուցման բակալավրիատի 1-5-րդ կուրսերի դասընթացները: Անհատական առարկաների դասախոսներից պահանջվեց կազմել հստակ դասացուցակներ և ընդունել ուսանողներին ըստ դասացուցակի:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հեռակա ուսուցման բակալավրիատի 2022-2023 ուս. տարվա ուսումնական գործունեության նախապատրաստումը համարել բավարար:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյանը ներկայացրեց հեռակա ուսուցման 1-ից 5-րդ կուրսերի անհատական դասընթացների ժամաքանակներն ըստ ուսումնական պլանների:

1-ին կուրս – Ձայնադրում 4 ժամ

Նվագարան 8 ժամ

2-րդ կուրս – Ձայնադրում 4 ժամ

Նվագարան 8 ժամ

Խմբավարություն և խմբերգային դասարան 8 ժամ գործնական, 8 ժամ անհատական

3-րդ կուրս – Ձայնադրում 4 ժամ

Նվագարան 8 ժամ

Խմբավարություն և խմբերգային դասարան 8 ժամ գործնական, 8 ժամ անհատական

4-րդ կուրս – Ձայնադրում 4 ժամ

Նվագարան 8 ժամ

Խմբավարություն և խմբերգային դասարան 6 ժամ գործնական, 6 ժամ անհատական

5-րդ կուրս - Ձայնադրում 4 ժամ

Նվագարան 10 ժամ

Խմբավարություն և խմբերգային դասարան 14 ժամ գործնական, 10 ժամ անհատական

Նվագակցության դասարան 8 ժամ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հեռակա ուսուցման 1-ից 5-րդ կուրսերի անհատական դասընթացների ժամաքանակների հարցը համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2023թ.-ի հունվարի 16-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

ՕՐԱԿԱՐԳ –

1. Ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Առկա 3-րդ կուրսի մանկավարժական և առկա 2-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկաների նախապատրաստում:
3. Հեռակա ուսուցման մանկավարժական պրակտիկաների նախապատրաստում:

ԼՍԵՑԻՆ – Ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը ներկայացրեց ձմեռային քննաշրջանի արդյունքները, նշելով, որ առկա ուսուցման բակալավրիատի 1-ին կուրսում «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» առարկայից լուծարք է մնացել 3 ուսանող, 2-րդ կուրսում՝ «Սոլֆեջիո և հարմոնիա» առարկայից 3 ուսանող, 4-րդ կուրսում «Ձայնադրում» առարկայից բոլոր 22 ուսանողները ստացել են բավարար գնահատականներ: Առկա ուսուցման մագիստրատուրայի 1-ին կուրսում 5 ուսանողներից 1-ը չի ներկայացել քննությանը և ստացել է անբավարար գնահատական «Մեներգեցողության և խմբավարության դասավանդման մեթոդիկա» առարկայից, իսկ մագիստրատուրայի 2-րդ կուրսում 10 ուսանողները հանձնել են քննություն «Մեներգեցողություն և խմբավարություն» առարկայից և ստացել բավարար գնահատականներ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփումը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Առկա 2-րդ և 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկաների նախապատրաստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ, պրակտիկայի ղեկավար Շուշանիկ Մաթևոսյանը նշեց, որ առկա ուսուցման 2-րդ կուսի մանկավարժական պրակտիկան կանցկացվի փետրվարի 15-ից մայիսի 24-ը (1 խումբ) ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոցում, մեթոդիստ՝ Ելենա Դադոյան: Կուրսը բաղկացած է 17 ուսանողից: Իսկ առկա ուսուցման 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան կանցկացվի փետրվարի 9-ից մարտի 22-ը (2 խումբ) Խ. Աբովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում, մեթոդիստ՝ Անահիտ Գևորգյան և Գագիկ Ստեփանյանի անվան թիվ 135 հիմն.դպրոցում, մեթոդիստ՝ Նաիրա Մարգարյան: Կուրսը բաղկացած է 18 ուսանողից:
ՈՐՈՇԵՑԻՆ - Առկա 2-րդ և 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների նախապատրաստումը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստման հարցը:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ, պրակտիկայի ղեկավար Շուշանիկ Մաթևոսյանը նշեց, որ հեռակա ուսուցման 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան կանցկացվի փետրվարի 27-ից մարտի 27-ը (2 խումբ) Վազգեն Ա-ի անվան թիվ 168 հիմն.դպրոցում, մեթոդիստ՝ Արմինե Օջախյան և Ստ. Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցում, մեթոդիստ՝ Սուսաննա Պետրոսյան: 1 ուսանող կանցնի անհատական պրակտիկա Երևանի Հ. Շիրազի

անվան թիվ 169 հիմնական դպրոցում, քանի որ աշխատում է այդ դպրոցում ըստ մասնագիտության: Կուրսը բաղկացած է 14 ուսանողից:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստման հարցը համարել բավարար:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – Մագիստրատուրայի /ՄԿԾ/ և բակալավրիատի /ԲԿԾ/ կրթական ծրագրերի լրամշակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, որակի պատասխանատու, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանը նշեց, որ ձևավորված հանձնաժողովի համագործակցությամբ լրամշակել և արդի պահանջներին են համապատասխանեցրել բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերը;

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մագիստրատուրայի /ՄԿԾ/ և բակալավրիատի /ԲԿԾ/ կրթական ծրագրերը:

ԼՍԵՑԻՆ – Առկա բակալավրիատի և առկա մագիստրատուրայի 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, հարցաշարերի և ուսումնամեթոդական փաթեթների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոսները հաստատման ներկայացրեցին 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակի վերանայման և մշակման ենթարկված առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցաշարերը և ուսումնամեթոդական փաթեթները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել առկա բակյալլվրիատի և առկա մագիստրատուրայի 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցաշարերը և ուսումնամեթոդական փաթեթները:

ԼՍԵՑԻՆ- Անի Սարգսի Հակոբյանի՝ «Հայ ավանդական օրորներ» թեմայով, ԺԷ. 00.02-«Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցով ատենախոսության վերաբերյալ առաջատարի կարծիքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանը նշեց, որ Անի Հակոբյանի «Հայ ավանդական օրորներ» խորագրով ատենախոսությունը կարևոր և ազգային երաժշտամտածողության ցայտուն դրսևորումներով ժանրին՝ օրորներին նվիրված ամփոփ աշխատություն է, որով, հեղինակի վկայությամբ, միայն սկիզբ է դրվում այն գիտական, հետազոտական, գործնական աշխատանքներին, որոնք նա ծրագրում է իրականացնել ապագայում՝ դարձնելով ժողովրդի սեփականությունը, հանրայնացնելով տարբեր երգիչների և երգչուհիների համերգային կատարումներով:

Նա նշեց նաև, որ ատենախոսությունն իր գիտաճանաչողական, երաժշտավերլուծական, նյութի ընդգրկմամբ կարևոր ներդրում է ժողովրդական, ընդհանրապես ազգային երաժշտության ուսումնասիրության բնագավառում: Այն լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսությանն առաջադրվող պահանջներին և Անի Սարգսի Հակոբյանը արժանի է ԺԷ.00.02-«Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հավանություն տալ Անի Սարգսի Հակոբյանի՝ «Հայ ավանդական օրորներ» թեմայով, ԺԷ. 00.02-«Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցով ատենախոսության վերաբերյալ առաջատարի կարծիքին և այն ուղարկել ԳԱԱ Արվեստի ինստիտուտ:

Նիստի նախագահ՝ Ս. Էլբակյան
Քարտուղար՝ Լ. Սիմոնյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7**

2023թ.-ի փետրվարի 20-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

ՕՐԱԿԱՐԳ -
1. 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:
2. 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատում:
3. Առկա 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում /մեթոդիկա/:
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյանը նշեց, որ այս անգամ երաժշտատեսական առարկաներ դասավանդող դասախոսներից դասալսումներ իրականացել են Ա. Հակոբյանի և Ն. Մադոյանի դասարաններում:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Վ. Եդիգարյանը ներկայացրեց «Նվագարան» առարկան դասավանդող դասախոսների մոտ կայացած դասալսումները՝ Տ. Ալավերդյանի, Շ. Թադևոսյանի և Ա. Ադամյանի դասարաններում:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ Շ.Մաթևոսյանը ներկայացրեց «Խմբավարություն և խմբերգային դասարան» և «Ձայնադրում» առարկաներ դասավանդող դասախոսների մոտ իրականացրած դասալսումները, որոնք կայացել են Ռ. Հակոբովայի, Ա. Խաչատրյանի, Մ. Սիմոնյանի, Ա. Բաբուրյանի, Ջ. Սայադյանի և Մ. Ավետիսյանի դասարաններում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դասալսումների ընթացը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Աննա Հարությունյանը ներկայացրեց 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակի երաժշտատեսական առարկաներ դասավանդող դասախոսների դասարաններում պլանավորված բաց դասերի և դասալսումների գրաֆիկը: Դասալսումները կկայանան Գ. Մելիքսեթյանի, Մ. Բաղդասարյանի և Ա. Հարությունյանի դասարաններում:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, ա.գ.թ. Վ.Եդիգարյանը ներկայացրեց «Նվագարան» առարկան դասավանդող դասախոսների դասարաններում պլանավորված բաց դասերի և դասալսումների գրաֆիկը: Դասալսումները կկայանան Լ. Խաչատրյանի, Ն.Բադալյանի, Շ. Թադևոսյանի, Ա. Մկրտչյանի, Ֆ. Ավետիսյանի և Ա. Կոստանյանի դասարաններում:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ Շ.Մաթևոսյանը ներկայացրեց «Խմբավարություն և խմբերգային դասարան» և «Ձայնադրում» առարկաներ դասավանդող դասախոսների դասարաններում պլանավորված բաց դասերի և դասալսումների գրաֆիկը: Դասալսումները կկայանան Ս. Պետրոսյանի, Շ. Մաթևոսյանի, Ն. Մարգարյանի, Ա. Օջախյանի, Ա. Գասպարյանի, և Ք. Խաչիկյանի դասարաններում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկը:

ԼՍԵՑԻՆ – Հեռակա 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում

/մեթոդիկա/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր, մ.գ.դոկտոր Յ. Յուզբաշյանը ներկայացրեց հեռակա ուսուցման բակալավրիատի 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաները:

1. Ունկնդրումը, երգեցողությունը, մանկական նվագարաններով նվագը, որպես երաժշտության դասի գործունեության ձևեր:
2. Ժամանակակից երաժշտական դաստիարակության նպատակները և խնդիրները:
3. Երգը, պարը, քայլերգը, որպես երաժշտական դաստիարակության հիմք:
4. «Երաժշտություն» առարկայի բովանդակությունը և ուսումնական ընթացքի կազմակերպումը:
5. Ռիթմը՝ որպես աշակերտի երաժշտական դաստիարակության մաս:
6. Երաժշտական արվեստի ֆունկցիաները և դրանց իրականացումը երաժշտական կրթության մեջ:
7. Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքը աշակերտների հետ:
8. «Երաժշտության» ուսուցչի մանկավարժական կուլտուրան:

9. Երաժշտական կրթության հատուկ մեթոդների կիրառումը երաժշտության դասին:
10. Ուսուցման համընդհանուր մեթոդների կիրառումը երաժշտության դասին:
11. Դմիտրի Կաբալևսկու հանրակրթական դպրոցի «Երաժշտություն» առարկայի դասավանդման սկզբունքներն ու մեթոդները:
12. «Երաժշտություն» առարկայի տեսական և պատմական հիմունքները:
13. Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը:
14. Միջառարկայական կապերը դպրոցում:
15. Երաժշտության դասը՝ երաժշտական կրթության հիմնական ձև:
16. Դպրոցականների բազմաձայն երգեցողության զարգացումը:
17. Դպրոցականների երաժշտական լսողության զարգացման մեթոդիկան:
18. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը /1, 2, 3, 4, 5, 6, 7/ դասարանում:
19. Երաժշտական գործունեության տեսակները /1, 2, 3, 4, 5, 6, 7, / դասարանում:
20. Երգչային ունակությունների և հմտությունների զարգացումը /1, 2, 3, 4, 5, 6, 7, / դասարանում:
21. Ձայնափոխումը /մուտացիան/ դպրոցի միջին դասարաններում:
22. Ռիթմական զգացողության զարգացումը տարրական /կամ կրտսեր/ դասարաններում:
23. Երաժշտության ունկնդրումը /1, 2, 3, 4, 5, 6, 7/ դասարանում, որպես երեխաների երաժշտական դաստիարակության գործունեության կարևոր տեսակներից մեկը:
24. Ստեղծագործական ունակությունների զարգացումը կրտսեր դպրոցում:
25. Արվեստների փոխկապակցվածությունը 5-րդ դասարանում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել առկա 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաները:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ – Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը նշեց, որ classroom էլեկտրոնային հարթակում բոլոր էլեկտրոնային դասընթացներին կցված են ԿԷԿ բաժնի ամբիոնային, ֆակուլտետային էլ. հասցեները, և ուսանողներն ու դասախոսները, տեղադրված են ուսումնամեթոդական փաթեթները: Նշվեց, որ վերջինս չեն կատարել միայն.

1. Նունե Բաղալյանը, որը 1-ին կուրսում չի տեղադրել ուսումնական նյութերը և չի լրացրել էլեկտրոնային մատյանը, 2-րդ կուրսում չի տեղադրել հարցաշար, ուսումնական նյութեր և չի լրացրել էլեկտրոնային մատյանը, 4-րդ կուրսում չի տեղադրել հարցաշար, ուսումնական նյութեր և չի լրացրել էլեկտրոնային մատյանը :

2. Արմեն Մկրտչյանը, որը 1-ին կուրսում չի տեղադրել հարցաշար և չի լրացրել էլեկտրոնային մատյանը, 3-րդ կուրսում չի տեղադրել հարցաշար և չի լրացրել էլեկտրոնային մատյանը:

3. Աննա Ադամյանը և Քրիստինե Խաչիկյանը ուսանողների ներկա բացակաները լրացրել են հին մատյաններում:

Նրանց զգուշացվեց ուղղումներ կատարելու մասին:

Որոշվեց նաև, որ էլեկտրոնային գնահատվող առաջադրանքներ (ընթացիկ ստուգումներ) կկատարեն միայն երաժշտապատմական առարկաները և անհատական դասընթացներից՝

<<Ձայնադրում>> և <<Խմբավարություն և խմբերգային դասարան>> առարկաների դասախոսները: Երաժշտատեսական առարկաների դասախոսները կառաջնորդվեն դասընթացների ընթացքում ուսանողների պատրաստվածության աստիճանից, իսկ <<Նվագարան>> առարկայի դասախոսները կունենան անձնական նշումների տետրեր, որոնցում պարբերաբար կգնահատեն ուսանողներին իրենց կատարած աշխատանքի համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ - 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի շրջանակներում՝ <<Ուսուցման և դաստիարակության մեթոդիկա ՛՛Երաժշտություն՚՚>> դասընթացի առարկայական նկարագրի և թեմատիկ տրոհման հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը նշեց, որ 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի համար դիմել է 5 ուսանող և <<Ուսուցման և դաստիարակության մեթոդիկա ՛՛Երաժշտություն՚՚>> դասընթացը կվարի ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանը: Վերջինս նշեց, որ դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 40 ժամ, 34 ժամ դասախոսություն և 6 ժամ՝ գործնական: Պարապմունքները տեղի կունենան 36 ժամ առցանց և 4 ժամ առերես ձևաչափով: Նշվեց նաև, որ դասընթացն ավարտվում է ավարտական հետազոտական աշխատանքի պաշտպանությամբ և այն կառուցվում է երաժշտապատմական և երաժշտատեսական առարկաների իմացության վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի շրջանակներում՝ <<Ուսուցման և դաստիարակության մեթոդիկա ՛՛Երաժշտություն՚՚>> դասընթացի առարկայական նկարագիրն ու թեմատիկ տրոհումը:

ԼՍԵՑԻՆ - 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի շրջանակներում՝ <<Ուսուցման և դաստիարակության մեթոդիկա ՛՛Երաժշտություն՚՚>> դասընթացի համար դիմած ուսանողների ավարտական հետազոտական աշխատանքների թեմաները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը ներկայացրեց 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի շրջանակներում՝ <<Ուսուցման և դաստիարակության մեթոդիկա ՛՛Երաժշտություն՚՚>> դասընթացի համար դիմած ուսանողների ավարտական հետազոտական աշխատանքների թեմաները.

| | Ղեկավար | Թեմա |
|---|---|---|
| Պարսիյանց Գեղանուշ Ժիրայրի | մ.գ.դոկտոր, պրոֆեսոր՝ Յուրի Յուզբաշյան | «Երաժշտությունը, որպես արվեստի տեսակ և որպես դպրոցում ուսուցանվող առարկա» |
| Բալբաբյան Սերինե Բորիսի | մ.գ.դոկտոր, պրոֆեսոր՝ Յուրի Յուզբաշյան | «Հոգևոր երգերի ուսուցման առանձնահատկությունները հիմնական և ավագ դպրոցներում» |

| | | |
|---|---|---|
| Այվազյան Մարիամ Վահանի | մ.գ.թ., դոցենտ՝ Գոհար Մելիքսեթյան | «Երաժշտության ուսուցման և դասավանդման մեթոդներ» |
| Մովսիսյան Արփինե Ռոբերտի | մ.գ.դոկտոր, պրոֆեսոր՝ Յուրի Յուզբաշյան | «Ազգային երգարվեստի ուսուցումը հանրակրթական դպրոցի երաժշտության դասին» |
| Հովհաննիսյան Արևիկ Արմենի | մ.գ.թ., դոցենտ՝ Գոհար Մելիքսեթյան | «Հայ ժողովրդական երաժշտության տեղն ու դերը տարրական դպրոցի երաժշտության դասերին» |

ՈՐՈՇԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը որոշեց հաստատել 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի շրջանակներում՝ <<Ուսուցման և դաստիարակության մեթոդիկա ՙՙԵրաժշտություն՚Ւ>> դասընթացի համար դիմած ուսանողների ավարտական հետազոտական աշխատանքների թեմաները:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8**

2023թ.-ի մարտի 20-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ. Ս.Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական կազմը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ - 1. Մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվություն:

2. 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի հաշվետվություն:

3. Մագիստրատուրայի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստում:

4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ, պրակտիկայի ղեկավար Շ. Մաթևոսյանը նշեց, որ 2022-2023թթ. ուսումնական տարվա առկա բակալավրիատի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան անցնում է փետրվարի 14-ից և կավարտվի մարտի 22-ին: Կուրսը բաղկացած է 18 ուսանողից, որից 9-ը մանկավարժական պրակտիկան անցնում են Խ. Աբովյանի անվան թիվ 2 հիմն. դպրոցում, մեթոդիստ՝ Ա. Գևորգյան, իսկ մյուս 9-ը՝ Գագիկ Ստեփանյանի անվան թիվ 135 հիմնական դպրոցում, մեթոդիստ՝ Ն. Մարգարյան: Դասընթացը մենկնարկվել է նաև google classroom հարթակում, որտեղ ուսանողները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում:

Հեռակա 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան անցնում է փետրվարի 27-ից և կավարտվի մարտի 27-ին: Կուրսը բաղկացած է 14 ուսանողից, որից 7-ը պրակտիկան անցնում են Վազգեն Ա-ի անվան թիվ 168 հիմնական դպրոցում, մեթոդիստ՝ Ա. Օջախյան, նաև այս խմբի հետ պրակտիկային կցվել է հեռակա 4-րդ կուրսի վերականգնված ուսանող Օհանյան Էդգարը: Մյուս 6-ը պրակտիկան անցնում են Ս. Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցում, մեթոդիստ՝ Ս. Պետրոսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մանկավարժական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ - 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի հաշվետվությունը:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 2-րդ կուրսի մագիստրոսների գիտական ղեկավարները, նշելով, որ մագիստրոսները պատշաճ կերպով աշխատում են իրենց մագիստրոսական ատենախոսությունների վրա: Դժգոհեցին միայն Առաքելյան Ջուլիետայի և Կոնինյան Կարենի գիտական ղեկավարները, նշելով, որ նրանց մոտ աշխատանքը դեռևս թերի վիճակում է և նրանք հազվադեպ են հանդիպում գիտական ղեկավարների հետ, ինչն անհազնստության պատճառ է դառնում:

ՈՐՈՇԵՑԻՆ –2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Մագիստրատուրա 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ Շ. Մաթևոսյանը նշեց, որ մագիստրատուրա 1-ին կուրսի ներքոհիշյալ ուսանողների 2022-2023 ուս. տարվա մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպվում է նույն բաժնի առկա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերում 2023թ.-ի մարտի 30-ից մինչև ապրիլի 19-ը :

1. Գրիգորյան Ելենա Արթուրի

Ղեկավար է նշանակվում դոցենտ՝ Մարգարիտա Բաղդասարյանը:

2. Սողոմոնյան Մարիամ Սամվելի

Ղեկավար է նշանակվում դոցենտ՝ Մարգարիտա Բաղդասարյանը:

3. Նամենինկյան Անի Գարիկի

Ղեկավար է նշանակվում մ.գ.թ., դոցենտ՝ Գոհար Մելիքսեթյանը:

4. Մաթոսյան Ժաննա Արայի

Ղեկավար է նշանակվում մ.գ.թ., դոցենտ՝ Անահիտ Գևորգյանը:

5. Ավետիսյան Սոնա Գառնիկի

Ղեկավար է նշանակվում մ.գ.թ., դոցենտ՝ Անահիտ Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մագիստրատուրա 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման հարցը համարել բավարար:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ
ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Մանե Բարեղամյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը ներկայացրեց հայցորդ Մանե Բարեղամյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ <<Երգչական ձայնի ձևավորման և զարգացման մանկավարժական պայմանները>> և գիտական ղեկավարին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միաձայն քվեարկությամբ (կողմ-31, դեմ-0, ձեռնպահ-0) հաստատել երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Մանե Բարեղամյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ <<Երգչական ձայնի ձևավորման և զարգացման մանկավարժական պայմանները>> և գիտական ղեկավար նշանակել մ.գ. դոկտոր, պրոֆեսոր՝ Յուրի Յուզբաշյանին:

ԼՍԵՑԻՆ– Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթին դեկանի թեկնածություն առաջադրելու հարցը:

Ամբիոնի վարիչ Սարգիս Էլբակյանը ներկայացրեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի հայտարարությունը ¨ առաջադրեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Արա Հրավարդի Հակոբյանի թեկնածությունը, որը տվել է իր համաձայնությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ամբիոնի վարիչ, մ.գ.թ., պրոֆեսոր՝ Սարգիս Էլբակյանը, ա.գ.թ., դոցենտ՝ Աննա Հարությունյանը, ա.գ.թ., դոցենտ՝ Վյաչեսլավ Եղիզարյանը, դոցենտ՝ Ռիմա Հակոբովան, նշելով, Արա Հակոբյանը դրսևորել է իրեն որպես հմուտ ղեկավար, օժտված է մասնագիտական և մարդկային բարձր որակներով, դասախոսական կազմի և ուսանողների կողմից վայելում է մեծ հարգանք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ամբիոնը միաձայն քվեարկությամբ (կողմ-31, դեմ-0, ձեռնպահ-0) որոշեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթին առաջադրել արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Արա Հրավարդի Հակոբյանի թեկնածությունը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

2023թ.-ի ապրիլի 20-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի 2022-2023 ուս.տարվա հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար Աննա Հարությունյանը և պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Օրակարգ՝

1. Մագիստրոսական ատենախոսությունների նախնական պաշտպանություն:
2. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Մագիստրոսական ատենախոսությունների նախնական պաշտպանության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Աննա Հարությունյանը նշեց, որ 2022-2023 ուս. տարվա առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունը կայացել է սույն թվականի ապրիլի 11-ին, ապա ներկայացրեց նրանց մագիստրոսական ատենախոսությունների թեմաները և նախապաշտպանության արդյունքները.

Լիլիթ Գնորգի Էնդեման – մագիստրոսական ատենախոսության թեմա՝ «Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների երաժշտական ուսուցումը «Dalcroze Eurhythmics» մեթոդի կիրառմամբ», գիտ. ղեկ.՝ ա.գ.թ., դոցենտ Աննա Ադամյան - թույլատրել հրապարակային պաշտպանության:

Շուշաննա Մարզպետի Գրիգորյան - մագիստրոսական ատենախոսության թեմա՝ «Երգեցողությունը որպես ռիթմական զգացողության և շարժումային կարողության զարգացման միջոց», գիտ. ղեկ.՝ ա.գ.թ., դոցենտ Ա. Հարությունյան - թույլատրել հրապարակային պաշտպանության:

Լալա Մանուկի Սիմոնյան - մագիստրոսական ատենախոսության թեմա՝ «Սոֆա Ազնաուրյանի՝ երեխաների համար «Չիկարելիի արկածները» օպերայի երաժշտադաստիարակչական նշանակությունը», գիտ. ղեկ.՝ դոցենտ Մ. Բաղդասարյան - թույլատրել հրապարակային պաշտպանության:

Սոնա Արմենի Պողոսյան - մագիստրոսական ատենախոսության թեմա՝ «Կրտսեր դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման հիմնախնդիրները», գիտ. ղեկ.՝ մ.գ.դ., պրոֆեսոր Յ. Յուզբաշյան – թույլատրել հրապարակային պաշտպանության:

Անի Սարգսի Դանիելյան - մագիստրոսական ատենախոսության թեմա՝ «Ստեփան Լուսիկյանի ստեղծագործությունները «Երաժշտություն» առարկայի դասերին», գիտ. ղեկ.՝ ա.գ.թ., դոցենտ Ա. Հարությունյան – թույլատրել հրապարակային պաշտպանության:

Սվետլանա Արթուրի Սուլյան - մագիստրոսական ատենախոսության թեմա՝ «Վիպերգերի և պատմական երգերի դերը անձի ձևավորման գործընթացում», գիտ. ղեկ.՝ մ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքսեթյան – թույլատրել հրապարակային պաշտպանության:

Ռիմա Գառնիկի Հովհաննիսյան - մագիստրոսական ատենախոսության թեմա՝ «Օրորները՝ դպրոցականների ազգային արժեհամակարգի ձևավորման հիմք», գիտ. ղեկ.՝ մ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքսեթյան – թույլատրել հրապարակային պաշտպանության:

Անուշ Օլեգի Շևչենկո - մագիստրոսական ատենախոսության թեմա՝ «Արամ Խաչատրյանի «Մանկական ալբոմը»-ը ՙԵրաժշտություն՚ առարկայի դասերին», գիտ. ղեկ.՝ դասախոս Ն. Մադոյան – թույլատրել հրապարակային պաշտպանության:

Կարեն Հրաչյայի Կոնինյան - մագիստրոսական ատենախոսության թեմա՝ «Արեգ Լուսինյանի «Կրկես» դաշնամուրային պիեսների ժողովածուի կիրառումը դպրոցում», գիտ. ղեկ.՝ ա.գ.թ., դասախոս Ա. Հակոբյան – տալ մեկ շաբաթ ժամանակ ավելի գրագետ ձևով պատրաստվելու և ներկայանալու համար:

Ջուլիետա Գեղամի Առաքելյան - մագիստրոսական ատենախոսության թեմա՝ «Ազգային երգը, պարը, ազգային ավանդույթների պահպանումը «Երաժշտություն» առարկայի միջոցով», գիտ. ղեկ.՝ դասախոս Ն. Մաղոյան – տալ մեկ շաբաթ ժամանակ թեմայի բովանդակային նյութն առավել հստակեցնելու և խոսքը կազմակերպելու նպատակով:

Ամբիոնի վարիչ Աննա Հարությունյանը նշեց, որ ուսանողները, որոնց տրվել էր լրացուցիչ ժամանակ նշված թերություններն ուղղելու համար, մեկ շաբաթ անց շտկել էին իրենց սխալները և ներկայացել, ուստի նրանց ևս, որոշեցին թույլատրել հրապարակային պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ - 2022-2023 ուս. տարվա առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական ատենախոսությունները դրական կարծիքով ներկայացնել հրապարակային պաշտպանության:

ԼՍԵՑԻՆ – Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Աննա Հարությունյանը և ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանը նշեցին, որ հարկավոր է կատարել աշխատանքներ էլեկտրոնային հարթակում՝ առարկայական նկարագրերի հետ կապված, որոնցում փոփոխություններ պետք է կատարել ըստ նոր ձևաչափով մշակված մասնագրերի:

ՈՐՈՇԵՑԻՆ - Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10**

2023թ.-ի մայիսի 29-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ա.գ.թ., դոցենտ Աննա Հարությունյանը և պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Օրակարգ՝

1. Ամառային քննաշրջանի նախապատրաստում:
2. Առկա ուսուցման համակարգի /բակալավր/ ամփոփիչ ատեստավորման և մագիստրատուրայի /մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության/ արդյունքների ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի ամառային քննաշրջանի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Աննա Հարությունյանը ներկայացրեց ամառային քննաշրջանի նախապատրաստման ընթացքը, նշելով, որ հունիսի 1-ից 6-ն ընկած ժամանակահատվածում կկայանան առկա բակալավրի 1-3-րդ կուրսերի և առկա մագիստրատուրայի 1-ին կուրսի 2-րդ միջանկյալ ստուգումները, հունիսի 8-ից 28-ն ընկած ժամանակահատվածում կկայական առկա բակալավրի 1-3-րդ կուրսերի և առկա մագիստրատուրայի 1-

ին կուրսի մասնագիտական և համահամալսարանական առարկաների քննությունները, իսկ հունիսի 15-ին կկայանա առկա բակալավրի 2-րդ և 3-րդ կուրսերի պրակտիկայի պաշտպանությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ամառային քննաշրջանի նախապատրաստման ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Առկա ուսուցման համակարգի /բակալավր/ ամփոփիչ ատեստավորման, մագիստրատուրա /մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության/ արդյունքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Աննա Հարությունյանը ներկայացրեց առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման արդյունքները, նշելով, որ ամփոփիչ ատեստավորմանը մասնակցող բակալավրի 19 ուսանողներից 11-ը ստացան գերազանց, 7-ը լավ, 1-ը՝ բավարար գնահատական, իսկ մագիստրատուրայի 9 ուսանողներից 8-ը ստացան գերազանց, իսկ 1-ը՝ բավարար գնահատական:

ՈՐՈՇԵՑԻՆ – Առկա ուսուցման համակարգի /բակալավր և մագիստրատուրա/ ամփոփիչ ատեստավորման արդյունքների հարցը համարել բավարար:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման 1-ից 4-րդ կուրսերի ուսումնական գործընթացի կազմակերպման հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Աննա Հարությունյանը նշեց, որ հունիսի 5-ից կսկվի հեռակա ուսուցման բակալավրի 1-ից 4-րդ կուրսերի ուսումնական գործընթացը, որի համար՝ մինչ մայիսի 31-ը, classroom էլեկտրոնային հարթակում հարկավոր է տեղադրել հեռակա ուսուցման 1-ից 4-րդ կուրսերի ուսումնական գործընթացի ապահովման համար պահանջվող էլեկտրոնային ուսումնամեթոդական փաթեթները (առարկայական նկարագիր, հարցաշար, ուսումնական նյութ):
Ամբիոնի վարիչը նշեց նաև 1-ից 4-րդ կուրսերի դասընթացների դասաժամերը՝ ըստ 2022-2023 ուս. տարվա ուսումնական պլանի.

1-ին կուրս

Խմբավարություն և խմբերգային դասարան – 4 ժամ, 8 ժամ
Նվագարան- 8 ժամ
Ձայնադրում- 4 ժամ
Սոլֆեջիո և հարմոնիա- 20 ժամ

2-րդ կուրս

Խմբավարություն և խմբերգային դասարան - 4 ժամ, 8 ժամ
Նվագարան – 6 ժամ
Ձայնադրում – 4 ժամ
Սոլֆեջիո և հարմոնիա- 16 ժամ
Երգչախմբագիտություն- 4 ժամ

3-րդ կուրս

Խմբավարություն և խմբերգային դասարան – 8 ժամ, 8 ժամ
Նվագարան- 8 ժամ
Ձայնադրում- 4 ժամ
Մանկավարժական պրակտիկա- 6 ժամ

4-րդ կուրս

Խմբավարություն և խմբերգային դասարան – 6 ժամ, 6 ժամ
Նվագարան- 4 ժամ
Ձայնադրում- 4 ժամ
Նվագակցության դասարան- 8 ժամ
Մանկավարժական պրակտիկա- 6 ժամ

ՈՐՈՇԵՑԻՆ - Հեռակա ուսուցման 1-ից 4-րդ կուրսերի ուսումնական գործընթացի կազմակերպման հարցերը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Առկա բակալավրի 4-րդ և հեռակա բակալավրի 5-րդ կուրսերի 2-րդ կիսամյակներում՝ «Երաժշտական հոգեբանություն» ընտրովի դասընթացի վերականգման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Աննա Հարությունյանը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարում՝ առկա բակալավրի 4-րդ և հեռակա բակալավրի 5-րդ կուրսերի 2-րդ կիսամյակներում, կվերականգնվի «Երաժշտական հոգեբանություն» ընտրովի դասընթացը, որը կվարի դասախոս Էդգար Գյանջումյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Առկա բակալավրի 4-րդ և հեռակա բակալավրի 5-րդ կուրսերի 2-րդ կիսամյակներում՝ «Երաժշտական հոգեբանություն» ընտրովի դասընթացի վերականգման հարցը համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

2023 թ.-ի հունիսի 22-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար Աննա Հարությունյանը և պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:
2. Առկա ուսուցման համակարգի ամառային քննաշրջանի արդյունքների ամփոփում:
3. Առարկաների ուսումնական փաթեթների վերանայում:
4. 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -– Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Աննա Հարությունյանը ներկայացրեց հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքները, նշելով, որ 2023 թ.-ի հունիսի 06,07-ին տեղի ունեցած ամփոփիչ ատեստավորման ավարտական քննությանը մասնակցել են երաժշտական կրթություն մասնագիտության 12 ուսանող:

Քննական արդյունքում գրանցվել են.

գերազանց գնահատական - 2 ուսանող

լավ գնահատական – 6 ուսանող

բավարար գնահատական – 4 ուսանող

ՈՐՈՇԵՑԻՆ – Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփումը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Առկա ուսուցման համակարգի ամառային քննաշրջանի արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Աննա Հարությունյանը նշեց, որ բակալավրի առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսում՝ 20.06.2023թ.-ին կայացավ քննություն Երգչախմբագիտություն դասընթացից, որին մասնակցեց 17 ուսանողից 15-ը, իսկ 15.06.2023թ.-ին կայացավ 2-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկայի պաշտպանությունը, որին մասնակցեց 17 ուսանող: 3-րդ կուրսում՝ 09.06.2023թ.-ին կայացավ Պոլիֆոնիա դասընթացի քննությունը, որին մասնակցեց 18 ուսանող, 15.06.2023թ.-ին կայացավ մանկավարժական պրակտիկայի պաշտպանությունը, որին մասնակցեց 16 ուսանող (2 ուսանող հարգելի պատճառներով բացակայել էին) և 23.06.2023թ.-ին կայացավ քննություն Երաժշտության դասավանդման տեսություն և մեթոդիկա դասընթացից, որին մասնակցեցին 18 ուսանողից 17-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել առկա ուսուցման համակարգի ամառային քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:

ԼՍԵՑԻՆ – Առարկաների ուսումնական փաթեթների վերանայում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Աննա Հարությունյանը նշեց, որ վերանայվել են առկա ուսուցման բակալավրի 1-ից 4-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի ուսումնամեթոդական փաթեթները, որոնք տեղադրվել են դասախոսների անհատական թղթապանակների մեջ և առկա են ամբիոնի էլեկտրոնային փաթեթում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Առարկաների ուսումնական փաթեթների վերանայման հարցը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Աննա Հարությունյանը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում կայացած դասալսումների արդյունքները, նշելով, որ դրանք կայացել են հետևյալ դասախոսների դասարաններում.

- Մաթևոսյան Շուշանիկ- խմբավարություն և խմբերգային դասարան /04.04.2023/
- Պետրոսյան Սուսաննա- խմբավարություն և խմբերգային դասարան /06.04.2023/
- Սիմոնյան Մարիա- խմբավարություն և խմբերգային դասարան /11.04.2023/

- Հակոբովա Ռիմա- խմբավարություն և խմբերգային դասարան /13.04.2023/
- Եղիգարյան Վյաչեսլավ- Նվազարան /03.04.2023/
- Թաղևոսյան Շաքե- Նվազարան /04.04.2023/
- Դադոյան Ելենա- Նվազարան /19.06.2023/
- Կոստանյան Արուսյակ- Նվազարան /19.06.2023/

ՈՐՈՇԵՑԻՆ – 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների արդյունքները համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ